ժամկետից հետո, հետևաբար պատասխանող ՀՀ արդարադատության նախարարության հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է հայցվորի փաստարկներին առ այն, որ իրենց կողմից պահպանվել է Հրավերով սահմանված ընթացակարգը, ապա Դատարանն արձանագրում է, որ «Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-4-ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.06.2022թ.-ին փոփոխվել է գնումների գործընթացում բողոքարկումների իրականացման ընթացակարգը, հետևաբար հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվորն իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության միջոցները և եղանակները իրականացնում է սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով, հետևաբար հայցվորն հանդիսանալով համապատասխան իրավունքների կրողը պարտավոր էր իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնել՝ գործող օրենսդրությանը համապատասխան՝ անկախ հրավերում առկա ընթացակարգի բովանդակությունից:

Ավելին, Դատարանը գտնում է, որ հայցվորի փաստարկները՝ հրավերով սահմանված ընթացակարգով առաջնորդվելու վերաբերյալ իրավական արժեք կարող էին ունենալ հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդության առկայության և քննության դեպքում, մինչդեռ այդ փաստարկները, որևէ կերպ չեն կարող հիմք հանդիսանալ հաստատելու այնպիսի փաստ, որ սույն քաղաքացիական գործով հայցը ներկայացվել է օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով հայցը ենթակա է մերժման ՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

**Դատական ծախսեր.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով այն հանգամանքը, հայցվորը վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ սույն քաղաքացիական գործով հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

**Եզրափակիչ մաս.**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189, 191-192, 198 հոդվածների պահանջներով, դատարանը՝

**Վճռեց**

«Իրավաբան Էյ Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ պատասխանողներ՝ ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ Ֆինանսների

նախարարության՝ ՀՀԱՆ-ԲՄԽԾԲ-ԻԽՆ-22/28 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

**Դատավոր՝** **Էդ. Ամալյան**